ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«13» սեպտեմբերի 2024 թվականի N 89-Ա

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 06-093-0116-0030 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովսեփ Մարգարյանի դիմումը, անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման թիվ 30052023-06-0041 վկայականը կազմված 2005 թվականի դեկտեմբերի 6-ին, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի թիվ 188-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին մասով, ՀՀ կառավարության 24.11.2005թ. թիվ 2347-Ն որոշումը , ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածի և 66-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,ՀՀ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 627 հոդվածով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ՝ ավագանին որոշում է՝

1.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գյուլագարակ համայնքի Պուշկինո գյուղում գտնվող՝ Հովսեփ Մարգարյանին վարձակալության իրավունքով տրամադրված հողամասը, ՀՀ կառավարության 24,11,2005թ թիվ 2347-Ն որոշմամբ սեփականության իրավունքով փոխանցված է համայնքին որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների 06-093-0116-0030 ծածկագրով, որը մասնավորեցման ենթակա հողամաս է, ընդգրկված չէ ՀՀ Հողայի օրոնսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ուստի առաջնորդվելով վերը նշված օրենքներով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների 06-093-0116-0030 ծածկագրի 0,154 հա հողամասը 336000 /երեք հարյուր երեսունվեց հազար / ՀՀ դրամ, ուղղակի վաճառքի ձևով օտարել վարձակալ Հովսեփ Մարգարյանին:

2.Հովսեփ Մարգարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասն ուղղակի վաճառքով վաճառելու առուվաճառքի պայմանագիր:

3.Իրավունքը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ավագանու անդամներ-	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ		—	—	—
Օհանյան Ռուսլան		—	—	—
Սարգսյան Աիդա		—	—	—
Նալբանդյան Նարեկ		—	—	—
Մուրադյան Դավիթ		—	—	—
Պառավյան Գոհար		—	—	—
Այվազյան Սերյոժա		—	—	—
Գրիգորյան Արսեն		—	—	—
Այվազյան Վրույր		—	—	—
Գևորգյան Համլետ	—	—	—	բացակա
Քալաշյան Վարսենիկ	—	—	—	բացակա
Արոյան Տիգրան	—	—	—	բացակա
Տոնոյան Արտյոմ	—	—	—	բացակա
Գրիգորյան Թամարա	—	—	—	բացակա
Սարգսյան Ալիկ	—	—	—	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ/